# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /ՄՈԴՈՒԼ 1/

| | |
|---|---|
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ |
| ԱՄԲԻՈՆ | ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈԴՈՒԼ | ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /1 ՄՈԴՈՒԼ / |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ | 1210B1/05.1, 2 ՄՈԴՈՒԼ |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾ |
| ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ | 1-ին կուրս /1-ին կիսամյակ |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ | • Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության հին, միջին եւ նոր շրջանի վերաբերյալ,<br>• ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ,<br>• դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի,<br>• որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում<br>• Որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում,<br>• հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն:՝ |
| ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ | ԳԻՏԵԼԻՔ<br>• Հայկական լեռնաշխարհը հայոց քաղաքակրթության բնօրրան, աշխարհագրական դիրքը, հաղորդակցության ուղիները, ֆիզիկաաշխարհագրական համառոտ բնութագիրը<br>• Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները Ք.ա. III-I հազարամյակներում<br>• Հայոց պետականությունը Ք.ա. VI դարից մինչեւ Ք.հ. V դար<br>• Հայաստանի քաղաքական դրությունը V-IX դարերում<br>• Հայոց պետականությունը IX-XIV դարերում<br>• Հայ ազատագրական միտքը XVI-ի XVIII դարերում<br>• Ազգային ազատագրական պայքարը XIX դարի վերջում եւ XX դարի սկզբում<br>• Հայոց եղեռնը<br>• 1917թ Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունները եւ Հայաստանը<br>• Մշակութային ձեռքբերումները հին, միջին եւ նոր շրջանում<br><br>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ<br>• Օգտվելով սկզբնաղբյուրներից եւ ուսումնասիրություններից, ինքնուրույն գնահատել, վերլուծել, համեմատել փաստերը եւ մտահանգումներ անել:<br>• Քննարկել եւ ներկայացնել Վանի թագավորության պատմության հիմնահարցերը, Երվանդունյաց պետության եւ Աքեմենյան |

| | |
|---|---|
| | տերության, Մեծ Հայքի Արտաշեսյան եւ Արշակունիների թագավորությունների օրոք հայ-պարթեւական, եւ հայ-հռոմեական քաղաքական առնչությունները եւ դրանց ազդեցությունը հայոց պետականության զարգացման վրա<br>• Վերլուծել ու գնահատել V դարի ապստամբությունների պատմական նշանակությունը<br>• Վերլուծել արաբների դեմ համաժողովրդական պայքարի անհրաժեշտության եւ արաբական տիրապետության դեմ VIII դարի ազատագրական պայքարի անհաջողության պատճառները:<br>• Մեկնաբանել Բագրատունյաց թագավորության վերականգնման, հզորացման եւ անկման ներքին ու արտաքին պատճառները:<br>• Գնահատել հայրենի բնիկ տարածքից դուրս պետականություն կերտելու հայ ժողովրդի կարողությունը:<br>• Ներկայացնել հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները XVII դարի վերջին եւ բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները:<br>• Ներկայացնել եւ վերլուծել XIX-XX դարերի ազատագրական շարժումները<br>• Սեփական տեսակետ արտահայտել Հայկական հարցի եւ նրա միջազգայնացման վերաբերյալ<br>• Վերլուծել Ռուսաստանի ժամանակավոր եւ բոլշեւիկյան կառավարությունների դիրքորոշումը հայկական հարցում եւ այդ քաղաքականության վերաբերյալ արտահայտել սեփական վերաբերմունք:<br><br>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ<br>• Հայոց պատմության ուսուցանվող ժամանակաշրջանի վերաբերյալ հիմնարար գիտելիքների տիրապետում<br>• Ազգային-պետական մտածողություն<br>• Ներկան եւ ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերի գիտակցում: |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ | • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 2<br>• ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄ - 32<br>• ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 16<br>• ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 16<br>• ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 2 |
| ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ | Հայոց պատմության իմացություն՝ հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներին համապատասխան |
| ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ | • Դասախոսություն<br>• Զրույց<br>• Բանավեճ<br>• Սեմինար պարապմունքներ<br>• Աշխատանք սկզբնաղբյուրների հետ<br>• Զննական մեթոդներ /քարտեզների ուսումնասիրություն, աշխատանք ուրվագծային քարտեզներով եւ այլն |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | 1. Հայկական լեռնաշխարհ<br>2. Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները Ք.ա. III-I հազարամյակներում<br>2.1 Շումերական, խեթական ու ասորեստանյան Արձանագրությունները Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների մասին:<br>2.2 Վանի թագավորության հիմնադրման ու զարգացման ընթացքը<br>3. Հայոց պետականությունը VI-I դարերում |

| | |
|---|---|
| | 3.1 Երվանդունիների թագավորությունը (Ք.ա. VI-III դարեր)<br>3.2 Արտաշեսյանների թագավորություն (Ք.ա. II-I դարեր)<br>4. Արշակունիների թագավորրությունը (Ք.ա. I-IV դդ)<br>5. Հայաստանի քաղաքական դրությունը V-IX դարերում<br>5.1 Մարզպանական Հայաստանը: Դրությունը Արեւմտյան Հայաստանում:<br>5.2 Հայ ժողովրդի ազատագրական պայքարն արաբական տիրապետության դեմ<br>6. Հայաստանը IX-XII դարերում<br>6.1 Բագրատունիների թագավորրությունը:<br>6.2 Հայկական թագավորրություններն ու իշխանապետությունները սելջուկ-թուրքերի տիրապետության շրջանում<br>7. Հայոց պետականությունը XIII-XIV դարերում<br>7.1Զաքարյանների իշխանապետությունը:<br>7.2Կիլիկիայի հայկական պետություն<br>8. Մշակութային ձեռքբերումները վաղ եւ զարգացած միջնադարում<br>9. Հայ ազատագրական միտքը XVI դարից մինչեւ XVIII դարի սկիզբը<br>9.1 Էջմիածնի ու Սեբաստիայի գաղտնի խորհրդաժողովները:<br>9.2 Ազատագրական միտքը XVII դարի կեսերին: Իսրայել Օրու Պֆալցյան ու Մոսկովյան ծրագրերը<br>10. Պետրոս I –ի պարսկական արշավանքը: Հայկական անկախ իշխանությունների ստեղծումը Արցախում եւ Սյունիքում: Թուրքական արշավանքն Արեւելյան Հայաստան: Խամսայի մելիքությունները<br>11. Հայ ազատագրական շարժման նոր օջախներ<br>11.1 Հովսեփ Էմինի ազատագրական գործունեությունը:<br>11.2 Մադրասի ազատագրական խմբակը:<br>11.3 Մովսես Սարաֆյանի ծրագիրը: «Հյուսիսային» եւ «Հարավային» նախագծերը<br>12. Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները XIX դարի 60-80-ական թթ: Հայ ազգային կուսակցությունների հիմնադրումը<br>13. Հայ ազգային-ազատագրական պայքարը XIX դարի 90-ական թթ եւ XX դարի սկզբին<br>14. Հայոց եղեռնը /1894-1922/<br>14.1Կոտորածների ու ցեղասպանության պատճառները: Արեւմտահայերի ցեղասպանությունը: Արեւելահայերի ոչնչացման ծրագիրը գործողության մեջ<br>14.2 Ցեղասպանության հետեւանքները:<br>14.3 Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը<br>15. 1917թ Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունները եւ Հայաստանը<br>15.1 Փետրվարյան հեղափոխությունը եւ Հայաստանը:<br>15.2 Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ Անդրկովկասը: «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:<br>15.3 Հայկական հարցը Բրեստի ու Տրապիզոնի հաշտության բանակցություններում:<br>15.4 Հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը/<br>16. Մշակութային ձեռքբերումները XVIII-XIX դարերում |

| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| ՀԻՄՆԱԿԱՆ | 1. Հայոց պատմություն (դասախոսությունների փաթեթ)<br>2. Հայոց պատմություն, Հր. Սիմոնյանի խմբագրությամբ, Երեւան, 2000: |

| | |
|---|---|
| ԼՐԱՑՈՒՑԻՉ | 1. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երեւան, 1981թ:<br>2. Հայկական հարց, Երեւան, 1996թ:<br>3. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ. հատոր 1-5<br>4. Հայ ժողովրդի պատմություն, Ժամկոչյան, Աբրահամյան, Մելիք-Բախշյան, Պողոսյան, Երևան, 1975 |

| | |
|---|---|
| ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ | Ամփոփիչ ստուգում /թեսթ/: Յուրաքանչյուրը 100 միավոր առավելագույն արժեքով: Թեսթը կազմված է 60 հարցից՝ 20-ը՝ 1, 40-ը՝ 2 միավոր արժեքով: |

| | |
|---|---|
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ | 1.Բաղադրիչ 1 - հաճախումներ 10 %<br>2.Բաղադրիչ 2 - ընթացիկ ակտիվություն 20%<br>3.Բաղադրիչ 3 - ամփոփիչ ստուգում 70% |

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| Գնահատման թվային միավորը | Տառային գնահատական | Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը |
|---|---|---|
| 96-100 | A+ | 5+ |
| 91-95 | A | 5 |
| 86-90 | A- | 5- |
| 81-85 | B+ | 4+ |
| 76-80 | B | 4 |
| 71-75 | B- | 4- |
| 66-70 | C+ | 3+ |
| 61-65 | C | 3 |
| 40-60 | C- | 3- |
| Մինչև 39 | D | 2 |

# ՈՒՍԱՆՈՂԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

**կրեդիտ/կրեդիտ ժամ – 2/60**

| Հ/Հ | Թեմա | Լսարանային ժամեր | | | | Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը | Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | սեմինար | Գործնական | լաբորատոր | | |
| 1. | Հայկական լեռնաշխարհ | 2 | | | | 1 | 3 |
| 2. | Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները Ք.ա. III-I հազարամյակներում/Շումերական, խեթական ու ասորեստանյան արձանագրությունները Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների մասին: Վանի թագավորության հիմնադրման ու զարգացման ընթացքը | 2 | | | | 0.5 | 2,5 |
| 3. | Հայոց պետականությունը VI-I դարերում /Երվանդունիների թագավորությունը (Ք.ա. VI-III դարեր), Արտաշեսյանների թագավորությունը (Ք.ա. II-I դարեր) | 2 | | | | 0.5 | 2,5 |
| 4. | Արշակունիների թագավորությունը (Ք.ա. I-IV դդ) | 2 | | | | 0.5 | 2,5 |
| 5. | Հայաստանի քաղաքական դրությունը V-IX դարերում /Մարզպանական Հայաստանը: Դրությունը Արեւմտյան Հայաստանում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարն արաբական տիրապետության դեմ/ | | 2 | | | 2 | 4 |
| 6. | Հայաստանը IX-XII դարերում /Բագրատունիների թագավորությունը: Հայկական թագավորություններն ու իշխանապետությունները սելջուկ-թուրքերի տիրապետության շրջանում/ | 2 | | | | 0.5 | 2,5 |
| 7. | Հայոց պետականությունը XIII-XIV դարերում /Զաքարյանների իշխանապետությունը: Կիլիկիայի հայկական պետություն/ | | 2 | | | 2 | 4 |
| 8. | Մշակութային ձեռքբերումները վաղ եւ զարգացած միջնադարում | | 2 | | | 1,5 | 3,5 |
| 9. | Հայ ազատագրական միտքը XVI դարից մինչեւ XVIII դարի սկիզբը /Էջմիածնի ու Սեբաստիայի գաղտնի խորհրդաժողովները: Ազատագրական շարժումը XVII դարի կեսերին: Իսրայել Օրու Պֆալցյան ու Մոսկովյան ծրագրերը/ | 2 | | | | 1 | 3 |
| 10. | Պետրոս I –ի պարսկական արշավանքը: Հայկական անկախ իշխանությունների ստեղծումը Արցախում եւ Սյունիքում: Թուրքական արշավանքն Արեւելյան Հայաստան: Խամսայի մելիքությունները/ | | 2 | | | 2,5 | 4,5 |
| 11 | Հայ ազատագրական շարժման նոր օջախներ /Հովսեփ Էմինիյ ազատագրական գործունեությունը: Մադրասի ազատագրական խմբակը: Մովսես Սարաֆյանի ծրագիրը: «Հյուսիսային» եւ «Հարավային» նախագծերը/ | | 2 | | | 2,5 | 4,5 |
| 12. | Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները XIX դարի 60-80-ական թթ: | 2 | | | | 1 | 3 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հայ ազգային կուսակցությունների հիմնադրումը | | | | | | |
| 13. | Հայ ազգային-ազատագրական պայքարը XIX դարի 90-ական թթ  եւ XX դարի սկզբին | | 2 | | | 2,5 | 4,5 |
| 14. | Հայոց եղեռնը /1894-1922/ /Կոտորածների ու ցեղասպանության պատճառները: Արեւմտահայերի ցեղասպանությունը: Արեւելահայերի ոչնչացման ծրագիրը գործողության մեջ: Ցեղասպանության հետեւանքները: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը/ | | 2 | | | 3 | 5 |
| 15. | 1917թ Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխութ-յունները եւ Հայաստանը /Փետրվարյան հեղափոխութ-յունը եւ Հայաստանը: Հոկտեմբերյան հեղափոխությո-ւնը եւ Անդրկովկասը:«Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Հայկական հարցը Բրեստի ու Տրապիզոնի հաշտության բանակցություններում: Հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը/ | 2 | | | | 1 | 3 |
| 16. | Մշակութային ձեռքբերումները XVIII-XIX դարերում | | 2 | | | 1 | 3 |
| | Ամփոփիչ  ստուգում | | | | | 5 | 5 |
| | Ընդամենը | 16 | 16 | | | 28 | 60 |